ԼԱ. ԱՍՏՂԱԲԵՐԴ

Միւս օրը, վաղ-առաւօտեան, ես եւ Ասլանը, մեր հիւրընկալի ծառաներից մէկին մեզ հետ առնելով, ճանապարհ ընկանք դէպի Աստղաբերդ: Արփիարը ինչ-որ գործերի համար մնաց նրա տանը:

Չգիտեմ ինչո՞ւ, ես միշտ ուրախութիւն էի զգում, երբ Ասլանը տանում էր ինձ մի հին ամրոց կամ բերդ ցոյց տալու: Նրանց աւերակները միշտ իմ վրայ ազդու տպաւորութիւն էին թողնում: Արդեօք նրա՞ համար, որ նրանց մէջ ես տեսնում էի անցեալ փառքի եւ զօրութեան խորտակուած յիշատակները, թէ՞ նրա համար, որ նրանց մէջ ետեւում էր ժողովրդի իշխանների կեանքը, սովորութիւնները եւ նրանց յարաբերութիւնները՝ թէ իւրայնոց եւ թէ օտարների հետ:

Այդ բերդի անունն անգամ ինձ համար հրապուրիչ էր. Աստղաբե՛րդ գեղեցիկ անուն է: Ասլանը ասում էր, Աստղկա-բերդ անուան փոփոխութիւնը պէտք է լինի:

Ճանապարհը ոլորուում էր հարթ դաշտավայրի միջով: Ես եւ Ասլանը նստած էինք ձիաների վրայ, իսկ մեր առջեւից ոտքով գնում էր մեր առաջնորդը:

Ես այժմ միայն առիթ ունեցայ Ասլանի հետ խօսել Արփիարի մասին: Այդ երիտասարդը ինձ խելքից հանել էր: Բայց դեռ չգիտէր՝ ո՞վ էր նա, որտեղի՞ց յայտնուեցաւ, ի՞նչ նպատակով էր եկել Մուշ եւ այլն: Ասլանը ինձ շատ բան չասաց նրա մասին, բայց որքան էլ ասաց, այն էլ բաւական էր իմ հարցասիրութիւնը գոհացնելու համար: Ես տեղեկացայ, որ նա բնիկ տրապիզոնցի էր, սովորել էր Վենետիկի Մխիթարեանների վանքում, ուսումնասիրել էր պատմութիւն, գլխաւորապէս հայոց պատմութիւն եւ հայոց լեզու, գիտէր եւ մի քանի հին ու նոր լեզուներ: Բայց ինչ որ աւելի զարմացրեց ինձ, նա կրօնով հայ-կաթոլիկ էր, եւ այնպէս դառնացած կերպով խօսում էր հայ-կաթոլիկների մասին.

«Ահա՛ մի երկրորդ Ջալլադ, — մտածում էի ես, — նա կրօնով հայ բողոքական, բողոքում էր հայր-բողոքականների հակաազգային հակումների դէմ, իսկ դա կրօնով հայ կաթոլիկ, բողոքում էր հայ կաթոլիկների հակաազգային հակումների դէմ: Բայց Ջալլադը քահանայ էր, չլինի՞ թէ դա եւս մի նորընծայ աբեղայ լիներ»:

— Ո՛չ, — ասաց Ասլանը, — սկզբում թէեւ ուխտած է եղել կրօնաւորական կարգը մտնել, բայց յետոյ թողել է:

— Նա կը մնա՞յ այստեղ: